

Հաստատված է Հայաստանի Հանրապետության  
վիճակագրության պետական խորհրդի  
2020 թվականի փետրվարի 27-ի թիվ 12-Ա որոշմամբ

**ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ  
ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՍԱԿԱԳՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ  
ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	3
I. ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԻ ՈՐՈՇՈՒՄԸ	4
II. ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԻ	4
III. ՍԳԻ-Ի ԸՆԴԳՐԿՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ	5
IV. ՍԳԻ-Ի ԶԱՄԲՅՈՒՂԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿՇԻՌՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԸՆԴԳՐԿՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՇԻՌՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ	6
V. ԳՆԵՐԻ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱՆՔ (ԱՊՐԱՆՔ (ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ)-ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԸՆՏՐԱՆՔ)	8
VI. ԴԻՏԱՐԿՎՈՂ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԱԶԱՅԻՆ ԿԵՏԵՐԻ ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ	9
VII. ՍԳԻ-Ի ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԴԱՍԱԿԱՐԳԻՉԸ	12
VIII. ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՄԻՋԻՆ ԳՆԵՐԻ (ՍԱԿԱԳՆԵՐԻ) ՀԱՇՎԱՐԿԸ	13
IX. ՀՀ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԻ ՀԱՇՎԱՐԿԸ	15
X. ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԲԱՅԱԿԱՅՈՂ ԿԱՄ ՍԵԶՈՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ (ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ԳՆԵՐԻ (ՍԱԿԱԳՆԵՐԻ) ԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՆԴԵՔՍՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ	18
XI. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԳՆԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԵԹՈԴ	23
XII. ՈՐԱԿԻ ՃՇԳՐՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ	24
XIII. ՀՀ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԻ ՀԱՇՎԱՐԿԸ ՏԱՐՔԵՐ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ	27
XIV. ՍԳԻ-Ի ԱՄՓՈՓ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ	28

## Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Սույն փաստաթղթի նպատակն է ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում սպառողական ապրանքների գների և ծառայությունների սակագների վիճակագրական դիտարկումների կազմակերպման, սպառողական գների ինդեքսի (այսուհետ՝ ՍԳԻ) հաշվարկման հիմնական մեթոդաբանական սկզբունքները:

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը ՍԳԻ-ն գների ինդեքսներից միակն է, որը օգտագործվում է երկրներում որպես գնաճի ցուցանիշի փոխարինող, քանզի այն ապահովում է գնաճի տիրույթին վերաբերվող նվազագույն պահանջները՝ յուրաժամանակությունը (օպերատիվությունը), սպառման ոլորտի առավել ընդգրկունությունը և զգայունակությունը (սենսիտիվությունը):

ՀՀ նախարարների խորհրդի 1991թ. օգոստոսի 24-ի թիվ 530 որոշման համաձայն ՀՀ վիճակագրական համակարգում ստեղծվել է գների և սակագների դիտարկման և գրանցման պետական ծառայություն, որը իրականացնում է ՀՀ տարածքում մանրածախ առևտրի, արտադրողների գների և ծառայությունների սակագների դիտարկում և դրանց հիման վրա ինդեքսների հաշվարկ:

Սպառողական գների մակարդակի և ընդհանրապես գների շարժի (դինամիկայի) ուսումնասիրությանը նպատակաուղղված վիճակագրական դիտարկումներն իրականացվում են հիմնվելով ՀՀ ՎԿ կողմից մշակված սույն մեթոդաբանության վրա:

Սպառողական գների դիտարկումներն և ինդեքսի հաշվարկներն իրականացվում են ըստ ՀՀ ՎԿ տարեկան աշխատանքների ծրագրի, որը յուրաքանչյուր տարի հաստատվում է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից և հնգամյա վիճակագրական աշխատանքների ծրագրի (հաստատվում է ՀՀ Ազգային ժողովի կողմից) շրջանակներում:

Հայաստանի Հանրապետությունում սպառողական գների ինդեքսի հաշվարկը կատարվում է սկսած 1993թ. հունվարից: Ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը մշակվել է Արժույթի միջազգային հիմնադրամի հետ համատեղ և ամբողջությամբ համապատասխանում է միջազգային չափանիշներին:

Մշակված մեթոդաբանության՝ տեղեկատվական աղբյուրների ընտրության, տեղեկատվության հավաքագրման, հաշվարկների կատարման, ելքային ցուցանիշների հրապարակման և պահպանման հիմքում ընկած դրույթները և գործողությունների կարգը համապատասխանեցված են և իրագործվում են ըստ միջազգային 6 հեղինակավոր և լիազորված կազմակերպությունների (Աշխատանքի միջազգային գրասենյակ, Արժույթի միջազգային հիմնադրամ, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, Եվրոպական համայնքների վիճակագրական գրասենյակ (Եվրոստատ), Միավորված ազգերի կազմակերպություն և Համաշխարհային բանկ) կողմից մշակված Սպառողական գների ինդեքսի ձեռնարկի (Consumer price index manual, Theory and practice. 2004):

## I. ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆՂԵՔՍԻ (ՍԳԻ) ՈՐՈՇՈՒՄԸ

1.1. Սպառողական գների ինդեքսն որոշում է կայուն զամբյուղի ապրանքների գների և ծառայությունների սակագների ընդհանուր մակարդակի փոփոխությունը ժամանակի ընթացքում և որոշում այդ արժեքի հարաբերակցության մեծությունը հաշվետու ժամանակահատվածում բազիսային ժամանակահատվածի համեմատ:

ՍԳԻ-ն բնութագրում է բնակչության կողմից ձեռք բերված ապրանքների և ծառայությունների գների և սակագների ընդհանուր մակարդակի փոփոխությունը տարեկան, եռամսյակային, ամսական պարբերականությամբ:

1.2. Գոյություն ունեն ՍԳԻ-ի օգտագործման և կիրառման հետևյալ հիմնական ուղղությունները՝

- որպես գնաճի մակարդակը բնութագրող հիմնական ցուցանիշ,
- ընթացիկ գներով մակրոտնտեսական ցուցանիշները համադրելի գներով վերահաշվարկման համար, այսինքն հանդիսանում է որպես դեֆլյատոր ազգային հաշիվների ցուցանիշները հաստատուն գներով վերահաշվարկելու համար,
- աշխատավարձերի և թոշակների ինդեքսավորման գործակից:

ՍԳԻ-ն հանդիսանում է մակրոտնտեսական կարևորագույն ցուցանիշներից մեկը, որը պետական մարմինների կողմից օգտագործվում է դրամավարկային և ֆինանսական քաղաքականության մշակման և իրագործման, տնտեսության մեջ գնաճային գործոնների վերլուծության, կանխատեսման և զսպման, առանձին իրավաբանական վիճաբանություններ լուծելու համար և այլն:

Հայաստանի Հանրապետությունում ՍԳԻ-ն հանդիսանում է գնաճը բնութագրող միակ ցուցանիշը:

## II. ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԻ

Սպառողական գների և ծառայությունների սակագների դիտարկումն իրականացվում է ընտրանքային կարգով: Գների և սակագների դիտարկումը սպառողական շուկայում և սպառողական գների և գների ինդեքսների հաշվարկն անց է կացվում աշխատանքային մի քանի փուլերով՝

- ✓ ապրանքների և ծառայությունների գների և սակագների դիտարկման համար բնակավայրերի ընտրանք,
- ✓ բազային առևտրի և ծառայություններ մատուցող կազմակերպությունների (որտեղ պետք է կազմակերպվեն դիտարկումները) ընտրանք,
- ✓ դիտարկման համար ապրանք (ծառայություն)-ներկայացուցիչների ընտրանք,
- ✓ գների և սակագների դիտարկում,
- ✓ միջին գների (սակագների) հաշվարկ,
- ✓ ՍԳԻ-ի զամբյուղի կշիռների ձևավորում և հաշվարկ,
- ✓ Սպառողական գների ինդեքսի հաշվարկ:

Սպառողական գների ինդեքսի հաշվարկի հիմքում ընկած են երկու հիմնական տեղեկատվական բազայից ստացված տվյալները.

- գնադիտարկման արդյունքում արձանագրված ընթացիկ և նախորդ ամիսներին ապրանքների (ծառայությունների) միջին գների (սակագների) փոփոխություններն արտահայտող ինդեքսային գործակիցները,
- բազիսային ժամանակաշրջանին նախորդող տարվա տնային տնտեսությունների սպառողական փաստացի ծախսումների մասին ցուցանիշները, որոնք հիմք են հանդիսանում ՍԳԻ-ի զամբյուղի կառուցվածքի և ընտրված ապրանք (ծառայությունների) կշիռների ձևավորման համար:

### III. ՍԳԻ-Ի ԸՆԴԳՐԿՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

ՍԳԻ-ի ընդգրկունությունը կարելի է տարանջատել 2 հիմնական խմբերի՝

- աշխարհագրական ընդգրկունություն
- տվյալների ընդգրկունություն:

#### III.ա ՍԳԻ-ի աշխարհագրական ընդգրկունությունը

«Սպառողական ապրանքների (ծառայությունների) գների (սակագների) ամենամսյա դիտարկումներն՝ ըստ սահմանված մեթոդաբանության, իրականացվում են քաղաքային բնակավայրերում՝ մայրաքաղաք Երևանում և հանրապետության 10 քաղաքներում, որոնք ներկայացնում են «Ք» բոլոր 10 մարզերը:

Ըստ մարզերի, գների (սակագների) դիտարկումները կատարվում են հիմնականում մարզկենտրոններում կամ համեմատաբար բնակչության մեծ թվաքանակ ունեցող քաղաքներում: Ընտրված բնակավայրերի սպառողական շուկայում իրականացված դիտարկումների հիման վրա հաշվարկված ՍԳԻ-ները հանդիսանում են համապատասխան մարզի գնաճի մակարդակը բնորոշող ցուցանիշներ:

«ՍԳԻ-ի հաշվարկման համար գնադիտարկումներն իրականացվում են հետևյալ բնակավայրերում՝

Մարզի անվանումը	Դիտարկվող բնակավայրը
Արագածոտն	Աշտարակ
Արարատ	Արտաշատ
Արմավիր	Վաղարշապատ
Գեղարքունիք	Գավառ
Լոռի	Վանաձոր
Կոտայք	Հրազդան
Շիրակ	Գյումրի
Սյունիք	Կապան
Վայոց Ձոր	Եղեգնաձոր
Տավուշ	Իջևան

Վերը նշված բնակավայրերի և մայրաքաղաք Երևանի հաշվարկված առանձին ՍԳԻ-ների և համապատասխան կշիռների ագրեգացված ցուցանիշը կազմում է ընդամենը ՀՀ սպառողական գների ինդեքսը:

### **III.բ ՍԳԻ-ի տվյալների ընդգրկունությունը, տեղեկատվական աղբյուրները**

ՍԳԻ-ի հաշվարկման համար անհրաժեշտ տվյալների տեղեկատվական աղբյուրները կարելի է բաժանել երկու խմբի՝

- ՍԳԻ-ի զամբյուղի ձևավորման համար ապրանք-ծառայությունների կշիռների հաշվարկման համար անհրաժեշտ տվյալներ,
- ընտրված ապրանքների և ծառայությունների գների և սակագների կազմակերպված դիտարկման հիման վրա ձևավորված գնային տվյալներ:

Երկրորդ խմբի տվյալների հիման վրա հաշվարկվում են ինդեքսների գործակիցներ, որոնք հաջորդաբար զուգորդվում են համապատասխան կշիռներով տարբեր մակարդակի խմբավորված (ագրեգացված) ինդեքսներ ստանալու համար:

### **IV. ՍԳԻ-Ի ԶԱՄԲՅՈՒՂԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿՇԻՌՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԸՆԴԳՐԿՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՇԻՌՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ**

ՍԳԻ-ի ապրանքների և ծառայությունների զամբյուղի կշիռների ձևավորման համար անհրաժեշտ ցուցանիշները ստացվում են առաջնահերթ՝ հիմնվելով ՀՀ ՎԿ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (SSԿԱՀ) արդյունքում ստացված տնային տնտեսությունների կողմից իրականացված դրամային ծախսումների մասին տվյալների հիման վրա:

Հետազոտության մեջ ընդգրկվում են բոլոր տեսակի տնային տնտեսություններն անկախ եկամտի աղբյուրից և չափից:

Հետազոտություններն իրականացվում են մեկ տարվա ընթացքում՝ տնային տնտեսությունների և բնակավայրերի ամենամսյա փոխարինմամբ (ռոտացիայով):

**Կշիռների ձևավորման գործընթացն** իրականացվում է հետևյալ փուլերով՝

1. Վերլուծելով բազիսային տարում տնային տնտեսությունների կողմից սպառված ապրանքների և ծառայությունների ցանկը համապատասխան դրամային ծախսումների մասին տվյալներով ճշգրտվում է յուրաքանչյուր ապրանքախմբի մեջ մտնող ապրանքների և ծառայությունների կազմը և կառուցվածքն իրենց համապատասխան ծախսերով,
2. ընտրվում են այն ապրանքներն ու ծառայությունները, որոնք բնակչության կողմից տվյալ ժամանակահատվածում ունեցել են լայն սպառում և տնային տնտեսությունների կողմից իրականացված ընդհանուր դրամական ծախսումների ծավալում ունեցել են 0.001 և ավել տոկոս տեսակարար կշիռ,
3. հիմնվելով տնային տնտեսությունների կողմից ապրանքների (ծառայությունների) ձեռք բերման (գնման) համար կատարված միայն դրամային ծախսերի մասով

տվյալների վրա, հաշվարկվում է յուրաքանչյուր ապրանքի (ծառայության) տեսակարար կշիռն ընդհանուր սպառողական զամբյուղում:  
Այդ կշիռները ստանալու համար իրականացվում են հետևյալ հաշվարկները՝

**ա.** Տնային տնտեսությունների կողմից իրականացված դրամային ծախսումների մասին ամբողջական տվյալների հիման վրա կատարվում են ՍԳԻ-ի զամբյուղի ապրանքների և ծառայությունների կշիռների վերջնական հաշվարկները:

Արդեն իսկ ճշգրտված ապրանքների և ծառայությունների ծախսերը, հետևաբար կշիռները, խմբավորվում են ըստ գործող «Անհատական սպառում ըստ նպատակների դասակարգչի» (ԱՍԸՆԴ) խմբավորումներին համապատասխան (օրինակ՝ «կենցաղային էլեկտրաապրանքներ» ապրանքախմբի մեջ մտնում են՝ հեռուստացույց, ձայնարկիչ, երաժշտական կենտրոն, տեսամագնիտոֆոն, տեսախցիկ, ֆոտոապարատ և այլ ապրանքատեսակների համար կատարած ծախսերը):

Սպառողական զամբյուղի մեջ ընդգրկված որոշ ապրանքների և ծառայությունների համար ծախսումների մասին տվյալներն, երբ դրանք որևէ պատճառով բացակայում են տնային տնտեսությունների հետազոտության ցուցանիշներում (երբ օրինակ, ընտրանքում ընդգրկված տնային տնտեսություններից որևէ մեկը չի օգտվել օդային տրանսպորտից, այսինքն՝ բացակայում է այդ ծառայության կշիռը տվյալ տարվա համար), ճշգրտվում են կամ տեսակարար կշիռները հաշվարկվում են, օգտագործելով նաև տնտեսության համապատասխան ճյուղերում բազիսային տարում ձևավորված համապատասխան վիճակագրական ցուցանիշներով:

**գ.** Առևտրի և ծառայության կետերից որևէ ապրանքի կամ ծառայության սպառման (վաճառքի) ծավալների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման միջոցով:

**դ.** Փորձագիտական մեթոդներով:

Կշիռների մասին ստացված տվյալները քննարկվում են ՀՀ վիճակագրության պետական խորհրդում և ընդունվում է անհատական որոշում ՍԳԻ-ի զամբյուղի հաշվետու տարվա կշիռների մասին:

### **Մարզերի կշիռները ՍԳԻ-ի հաշվարկներում**

Բացի ՍԳԻ-ի զամբյուղում ներառած ապրանքների և ծառայությունների տեսակարար կշիռներից անհրաժեշտ է ունենալ նաև նրա կազմում ընդգրկված առանձին մարզերի կշիռների մասին տվյալներ, որպեսզի հնարավոր լինի մարզերը ներկայացնող բնակավայրերի ՍԳԻ-ներից ստանալ մեկ ընդհանուր սպառողական գների ինդեքս Հայաստանի Հանրապետության համար:

Մարզերի կշիռները ձևավորվում են հետևյալ վիճակագրական ցուցանիշների հիման վրա՝

1. ապրանքաշրջանառության ծավալ,
2. մատուցված ծառայությունների ծավալ,
3. բնակչության թվաքանակ:

Կշիռների հաշվարկման գործընթացն է՝

**ա.** յուրաքանչյուր մարզի ապրանքաշրջանառության և մատուցված ծառայությունների ծավալների մասին ցուցանիշները տվյալ մարզի համար գումարվում են միմյանց,

բ. ստացված տվյալները կշռվում են ընդամենը հանրապետության համապատասխան գումարային ցուցանիշի մեջ,

գ. յուրաքանչյուր մարզի բնակչության թվաքանակի մասին տվյալները կշռվում են ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում,

դ. վերը նշված երկու կշիռների պարզ միջին թվաքանական ցուցանիշը հանդիսանում է մարզի ՍԳԻ-ի տեսակարար կշիռ ՀՀ ՍԳԻ հաշվարկման համար:

ՀՀ ՍԳԻ-ի համար կիրառվող կշիռների արդիականացումն (վերահաշվարկն) իրականացվում է յուրաքանչյուր տարի:

**V. ԳՆԵՐԻ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱՆՔ  
(ԱՊՐԱՆՔ (ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ)-ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԸՆՏՐԱՆՔ)**

Սպառողական ապրանքի (ծառայության) ներկայացուցիչ է համարվում կոնկրետ ապրանքի (ծառայության) համասեռ ապրանքների (ծառայությունների) խումբը, որոնք իրենց սպառողական հատկանիշներով գրեթե չեն տարբերվում մեկը մյուսից, կամ էլ ունեն աննշան որակական տարբերություններ, որոնք չեն ազդում ապրանքի (ծառայության) հիմնական սպառողական հատկանիշների վրա:

*Առանձին սպառողական ապրանքատեսակի (ծառայության տեսակի) սպառողական միջին գինը (սակագինը) հաշվարկվում է որպես բոլոր բազային կազմակերպություններում արձանագրված գների միջին երկրաչափական մեծություն:* Միջին գների ձևավորման վրա ազդում են տարբեր գործոններ, ինչպիսիք են՝ տարածքային շեղումները, սեզոնային տատանումները, տեսականու բազմազանությունը և այլն:

Սպառողական գների ինդեքսի զամբյուղի կազմում ներառվում են բոլոր տեսակի ապրանքները և ծառայությունները, որոնք ունեն լայն սպառում բնակչության կողմից, և հետևաբար համեմատական մեծ տեսակարար կշիռ սպառման ծախսերում:

Միևնույն ժամանակ սպառողական զամբյուղում անհրաժեշտ է ընդգրկել նաև այսպես կոչված թանկարժեք՝ ոչ պարտադիր օգտագործման համար նախատեսված ապրանքները և ծառայությունները (ոսկերչական ապրանքներ, նոր ավտոմեքենաներ, սև խավիար և այլն), որոնք չունենալով լայն սպառում հիմնական բնակչության շերտերում, այնուամենայնիվ իրենց համապատասխան՝ ոչ այդքան մեծ տեսակարար կշռով պետք է ներգրավված լինեն սպառողական զամբյուղում:

ՀՀ ՍԳԻ-ում չեն ներառվում կապիտալ սեփականությունը, օրինակ՝ տունը, ձեռնարկությունների կամ կառավարության կողմից սպառված ապրանքներն ու ծառայությունները, ինչպես նաև խաղատների կողմից մատուցված ծառայությունները:

Ըստ միջազգայնորեն ընդունված մեթոդաբանության, ՍԳԻ-ի հաշվարկներում չեն ընդգրկվում նաև գների կարճաժամկետ զեղչերը (2-ից 3 օր), հիմնական ապրանքատեսակի հետ առաջարկվող մեկ այլ զեղչված՝ հատուկ առաջարկվող ապրանքների և ծառայությունների գները, ինչպես նաև բնակչության որոշակի խմբերի համար իրականացվող զեղչերը:



ՍԳԻ-ի կազմում չեն ընդգրկվում էքսքլյուզիվ՝ բարձրարժեք բրենդային խանութներում վաճառվող ապրանքները, հնաոճ ապրանքները, հեղինակային գեղանկարչական ստեղծագործությունները և այլն:

Յուրաքանչյուր տարի դիտարկվող ապրանքների և ծառայությունների կազմն ու կառուցվածքը ենթարկվում են որոշակի փոփոխության՝ արդիականացման նպատակով: Գին արձանագրող վիճակագիրներն իրենց ամենամսյա դիտարկումների ընթացքում հետևում են սպառողական շուկաներում տարբեր ապրանքների և ծառայությունների նկատմամբ ներկայացված պահանջարկին և առաջարկին, խորհրդակցելով առևտրի կետերի մարկետոլոգ փորձագետների հետ, պարբերաբար, եռամսյա կտրվածքով ներկայացնում են առաջարկություններ ՀՀ ՎԿ կենտրոնական գրասենյակի համապատասխան բաժին, ապրանքների և ծառայությունների տեսակների փոփոխության մասին: Ապրանքատեսակի կամ ծառայության տեսակի սպառողական շուկայից անհետանալու ժամանակ, կիրառելով համապատասխան մեթոդաբանություն, դրանք փոխարինվում են նույն անվանմամբ և որակական հատկանիշներով մեկ այլ տեսակով:

Բացառապես նոր անվանմամբ և տեխնիկական բնութագրով ապրանք կամ բնակչությանը մատուցված ծառայություն կներառվի ՀՀ ՍԳԻ-ի կազմում միայն զամբյուղի վերանայման՝ վերահաշվարկման ժամանակ, եթե դրանք կունենան անհրաժեշտ մեծության տեսակարար կշիռ ՍԳԻ-ի զամբյուղում:

Յուրաքանչյուր ապրանքի համար պատրաստվում է մանրամասնեցված տեխնիկական բնութագիր՝ նկարագրություն, որը ներառում է արտադրող կազմակերպության, երկրի, ապրանքի որակական հատկանիշների, փաթեթավորման, չափման միավորի և այլնի մասին տեղեկատվություն:

Տեխնիկական բնութագրերի հետ մեկտեղ գին դիտարկող մասնագետներին տրվում է համապատասխան հրահանգավորում և առաջադրանք իրենց կողմից դիտարկվող բնակավայրի և ընդհանրապես մարզի համար բնորոշ և առանձնապես մեծ սպառում ունեցող ապրանքի կամ ծառայության տեսակի ընտրությունը կատարելու համար, հետագայում դրանց գների դիտարկումները կազմակերպելու նպատակով: Ապրանք (ծառայության) ներկայացուցչի ընտրանքին զուգահեռ, գնադիտարկողը կազմում է դրանց բնորոշ տեխնիկական բնութագրերը և ներկայացնում ՀՀ ՎԿ կենտրոնական գրասենյակի համապատասխան բաժին քննարկելու և դիտարկումների կազմում ընդգրկելու նպատակով:

## **VI. ԴԻՏԱՐԿՎՈՂ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԱԶԱՅԻՆ ԿԵՏԵՐԻ ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ**

*ՀՀ սպառողական գների (սակագների) դիտարկումների համար ընտրված առևտրի և ծառայություններ մատուցող կետերը կոչվում են ՍԳԻ-ի բազային կազմակերպություններ:*

Առևտրի ոլորտի բազային կազմակերպություններն՝ ինչպիսիք են սուպերմարկետները, մթերային խանութները, ոչ մթերային խանութները, խառը խանութները, գյուղատնտեսական մթերքի շուկաները, ինչպես նաև ծառայություններ մատուցող կազմակերպությունները՝ հանրային սննդի կետերը, իրավաբանական և

բանկային համակարգում գործող կազմակերպությունները, բժշկական հիմնարկները, ուսումնական հաստատությունները և այլն, պետք է համապատասխանեն մի շարք պահանջների: Դրանք են՝ առևտրաշրջանառության և մատուցված ծառայությունների համեմատաբար մեծ ծավալ, առևտրի սպասարկման ծառայություններ մատուցելու որոշակի մակարդակի առկայություն, դրանցում առկա ապրանքների և ծառայությունների կայուն խմբաքանակ, երկարատև կայուն գործունեության պատմություն, տեղաբաշխվածությունը (գտնվելու վայրը) և այլն:

Յուրաքանչյուր ապրանքի (ծառայության) - ներկայացուցչի համար բազային օբյեկտների քանակությունը տվյալ դիտարկման բնակավայրի համար հաշվարկվում է ելնելով համապատասխան մարզի առևտրաշրջանառության, մատուցված ծառայությունների ծավալների հանրապետության համապատասխան ցուցանիշների ընդհանուր ծավալներում ունեցած տեսակարար կշիռներից, ինչպես նաև բնակչության թվաքանակից:

Օրինակ, 2020 թվականի ՀՀ ՍԳԻ-ի հաշվարկման համար ապրանքաշրջանառության, մատուցված ծառայությունների ծավալի և մշտական բնակչության թվաքանակի 2019թ. արձանագրված համապատասխան ցուցանիշներից հաշվարկված մարզերի տեսակարար կշիռներն ունեն հետևյալ պատկերը՝

	ՀՀ մարզերը	Բնակավայրերը	Մանրաձախ առևտրի շրջանառության տեսակարար կշիռը	Ծառայությունների տեսակարար կշիռը	Մշտական բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	Ապրանքաշրջանառության, ծառայությունների և բնակչության թվաքանակի տեսակարար միջին կշիռը
	1	2	3	4	5	6= $((3+4)/2+5)/2$
	<b>Ընդամենը</b>		<b>100.00</b>	<b>100.00</b>	<b>100.00</b>	<b>100.00</b>
1	<b>Ք.ԵՐԵՎԱՆ</b>	Երևան	74.46	83.18	36.56	57.69
2	<b>ԱՐԱԳԱԾՈՏՆ</b>	Աշտարակ	1.41	0.71	4.22	2.64
3	<b>ԱՐԱՐԱՏ</b>	Արտաշատ	3.93	1.68	8.66	5.73
4	<b>ԱՐՄԱՎԻՐ</b>	Վաղարշապատ	3.51	1.56	8.91	5.72
5	<b>ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ</b>	Գավառ	1.81	0.78	7.70	4.50
6	<b>ԼՈՌԻ</b>	Վանաձոր	2.30	1.15	7.23	4.48
7	<b>ԿՈՏԱՅՔ</b>	Հրազդան	4.50	6.55	8.48	7.00
8	<b>ՇԻՐԱԿ</b>	Գյումրի	3.74	1.57	7.84	5.25
9	<b>ՍՅՈՒՆԻՔ</b>	Կապան	1.54	1.24	4.64	3.01
10	<b>ՎԱՅՈՑ ՁՈՐ</b>	Եղեգնաձոր	0.49	0.53	1.65	1.08
11	<b>ՏԱՎՈՒՇ</b>	Իջևան	2.32	1.04	4.11	2.90

Դիտարկվող բնակավայրերում բազային օբյեկտների քանակները հետևյալն են.

1. մայրաքաղաք Երևանում յուրաքանչյուր ապրանքի և ծառայության տեսակի համար դիտարկվում է 9-12 բազային օբյեկտ,
2. 3 տոկոսից բարձր տեսակարար կշիռ ունեցող մարզերի դիտարկվող բնակավայրերում յուրաքանչյուր ապրանքի և ծառայության տեսակի համար դիտարկվում է 6-9 բազային օբյեկտ,

3. մինչև 3 տոկոս տեսկարար կշիռ ունեցող մարզերի դիտարկվող բնակավայրերում յուրաքանչյուր ապրանքի և ծառայության տեսակի համար դիտարկվում է 3-6 բազային օբյեկտ :

Դիտարկվող բնակավայրը	Բազային օբյեկտների քանակը
ԵՐԵՎԱՆ	9-12
ԳՅՈՒՄՐԻ	6-9
ՎԱՆԱՁՈՐ	6-9
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ	6-9
ԱՐՏԱՇԱՏ	6-9
ՀՐԱԶԴԱՆ	6-9
ԳԱՎԱՌ	6-9
ԿԱՊԱՆ	6-9
ԱՇՏԱՐԱԿ	3-6
ԻՋԵՎԱՆ	3-6
ԵՂԵԳՆԱՁՈՐ	3-6

Առևտրի և ծառայության բազային օբյեկտների ընտրության իրավունքը վերապահված է վիճակագրության մարզային վարչություններին՝ համաձայնեցնելով ՀՀ ՎԿ կենտրոնական գրասենյակի համապատասխան բաժնի հետ: Հավաքագրվում և ներկայացվում են ընտրված ձեռնարկությունների անվանումները, հասցեները, հեռախոսահամարները և այլ տվյալներ:

Եթե տվյալ բնակավայրում իրականացված ընտրանքից հետո ի հայտ է եկել առևտրի կամ ծառայության համեմատաբար խոշոր օբյեկտ, ապա գին դիտարկող մասնագետը՝ խորհրդակցելով ՀՀ ՎԿ կենտրոնական գրասենյակի համապատասխան բաժնի հետ, այն ներառում է դիտարկվող օբյեկտների ցանկում՝ դիտարկվող բազային օբյեկտներից համեմատաբար ոչ այդքան ներկայացուցչական առևտրի (ծառայության) կետի փոխարեն:

ՍԳԻ-ն հաշվարկվում է ամսական կտրվածքով՝ հիմնվելով միևնույն (անփոփոխ) առևտրի և ծառայություն մատուցող կետերից ստացվող գնային տեղեկատվության վրա: Այն դեպքում, երբ դիտարկվող առևտրի կետը դադարեցնում է իր գործունեությունը, գնադիտարկողն իր հետագա գնադիտարկումներն իրականացնելու համար, համաձայնեցնելով ՀՀ ՎԿ կենտրոնական գրասենյակի համապատասխան բաժնի հետ, ընտրում է մեկ այլ առևտրի կետ, որն ունի նմանատիպ առևտրի կամ ծառայության սպասարկման պայմաններ և գների մակարդակ, ինչպիսիք առկա էին փակված առևտրի կետում:

Որոշ ապրանք-ծառայությունների գները (սակագները), այդ թվում պետության կողմից կարգավորվող բնակչությանը մատուցված ծառայությունների սակագները դիտարկվում և արձանագրվում են կենտրոնացված՝ ՀՀ ՎԿ կենտրոնական գրասենյակի համապատասխան բաժնի կողմից (տես՝ «Կարգ սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար սպառողական ապրանքների գների եվ ծառայությունների սակագների դիտարկման»):

## VII. ՍԳԻ-Ի ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԴԱՍԱԿԱՐԳԻՉԸ

Վիճակագրական տեղեկատվության հավաքագրման և մշակման զարգացումն ու կատարելագործումը, տվյալների բազաներում և ավտոմատացված համակարգերում համապատասխան տեղեկատվության միասնական ծածկագրումը, ինչպես նաև վիճակագրական ցուցանիշների միջազգային համադրելիությունը ապահովելու նպատակով ՀՀ ՍԳԻ-ի համար կիրառվող դասակարգիչ հաստատվել է «Անհատական սպառում ըստ նպատակների դասակարգչի» (ԱՍԸՆԴ) (ՀՀ էկոնոմիկայի նախարարի N 876-Ն 19.09.2013թ հրաման, ՀՀ էկոնոմիկայի նախարարի N 513-Ն 02.06.2014թ հրաման, ՀՀ ԳՏ 01.07.2014թ. 15/ (494)) ազգային տարբերակը:

ԱՍԸՆ դասակարգիչը հանդիսանում է «Ազգային հաշիվներ 2008» համակարգում կիրառվող չորս հիմնական դասակարգիչներից մեկը և նախատեսված է պետական վիճակագրության հետևյալ հիմնական ուղղություններում կիրառման նպատակով.

- տնային տնտեսությունների կենսամակարդակի հետազոտություններում՝ տնային տնտեսությունների սպառման և դրա բաղադրիչների դասակարգման և հաշվարկման նպատակով,

- գների վիճակագրությունում՝ սպառողական գների ինդեքսի դասակարգման և հաշվարկման նպատակով,

- ազգային հաշիվների համակարգում՝ տնային տնտեսությունների վերջնական սպառման բաղադրիչների դասակարգման նպատակով:

Համաձայն ԱՍԸՆ դասակարգչի *սպառողական ապրանքները* դասակարգվում են 2 հիմնական խմբերի՝

- սպառողական ապրանքներ
- սպառողական ծառայություններ:

**Սպառողական ապրանքներն** իրենց հերթին տարանջատվում են՝

- *կարճաժամ (Կ)* օգտագործման ապրանքներ (սննդամթերք, ծխախոտ, գեղահարդարման ապրանքներ և այլն),


- *միջին տևողության (Մ)* օգտագործման ապրանքներ (հագուստ, կոշիկ, ամանեղեն և այլն),

- *երկարաժամ (Ե)* օգտագործման ապրանքներ (կահույք, հեռուստացույց, լվացքի մեքենա, մարդատար ավտոմեքենա և այլն):

**Սպառողական ծառայությունները (Ծ)** բնակչությանը մատուցված ծառայություններն են, որոնք ապրանքի տեսք չեն ստանում:

Կարճատև օգտագործման ապրանքները տարբերվում են երկարատև և միջին տևողության օգտագործման ապրանքներից իրենց գների համեմատաբար ցածր մակարդակով, ինչպես նաև դրանց պիտանելիության և օգտագործման տևողությամբ: Եթե կարճատև օգտագործման ապրանքներն օգտագործվում են մեկ անգամ, և դրա հետ մեկտեղ ունեն համեմատաբար ցածր գներ, ապա միջին տևողության և երկարատև օգտագործման ապրանքները կարելի է օգտագործել երկար ժամանակ, մի քանի անգամ և դրանց գներն ունեն համեմատաբար բարձր մակարդակ:

ԱՍԸՆ դասակարգչի հիմնական կառուցվածքը պատկերված է հետևյալ տեսքով XX.X.X.X'



ՍԳԻ-ի կազմում ընդգրկված ապրանքները և ծառայությունները հետագայում նույնպես դասակարգվում են և ունեն հետևյալ պայմանական կոդավորումը XX.X.X.X.XX, իսկ դրանց տեսակները (ներկայացուցիչները)՝ XX.X.X.X.X.XX.XX: Այսպիսով ՍԳԻ-ի համար օգտագործվում է կոդավորման առնվազն 10 նիշ մակարդակ:

ՀՀ ՍԳԻ-ն վերը նշված դասակարգման հետ մեկտեղ դասակարգվում է նաև ըստ 3 հիմնական խոշոր խմբերի՝ պարենային ապրանքներ, ոչ պարենային ապրանքներ և ծառայություններ:

### VIII. ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՄԻՋԻՆ ԳՆԵՐԻ (ՍԱԿԱԳՆԵՐԻ) ՀԱՇՎԱՐԿԸ

Բազային օբյեկտներում յուրաքանչյուր ապրանքի և ծառայության տեսակի արձանագրված գնային տեղեկատվության հիման վրա հաշվարկվում է համապատասխան բնակավայրի տվյալ ապրանքատեսակի և ծառայության ներկայացուցչի միջին գինը:

Միջին գնի հաշվարկման համար օգտագործվում է հասարակ միջին երկրաչափական մեծության բանաձևը՝

$$\overline{P}_j = \sqrt[n]{P_1 * P_2 * \dots * P_n},$$

որտեղ՝

$\overline{P}_j$  - դիտարկվող բնակավայրի ապրանք (ծառայության) միջին գինն (սակագինն) է,

$P_1, P_2, \dots, P_n$  - միևնույն ապրանքի (ծառայության) առևտրի և ծառայության բազային օբյեկտներում արձանագրված ապրանք (ծառայություն)-ներկայացուցիչների գներն(սակագներն) են:

Ապրանքի (ծառայության) հանրապետական միջին գինը (սակագինը) հաշվարկվում է որպես միջին կշռված մեծություն բոլոր դիտարկվող բնակավայրերում տվյալ ապրանքի (ծառայության) համար հաշվարկված միջին գներից (սակագներից):

$$P_j = \frac{\sum p_{ij} Q_i}{\sum Q_i}$$

որտեղ՝

$P_{ij}$  - j - րդ ապրանքի միջին գինն է i-երորդ բնակավայրում,

$Q_i$  - i-րդ բնակավայրի տեսակարար կշիռն է ընդամենը ՀՀ-ում,

$$\sum Q_i = 100:$$

Հաշվարկման համար որպես տեսակարար կշիռ օգտագործվում են համապատասխան մարզի տեսակարար կշիռների մասին տվյալները (դրանց հաշվարկները նկարագրված են «**Մարզերի կշիռները ՍԳԻ-ում**» հատվածում):

Ապրանքների և ծառայությունների միջին գների մակարդակի փոփոխության վրա կարող են ազդել մի շարք գործոններ՝ ապրանքների և ծառայությունների նոր ներկայացուցիչների ի հայտ գալը, դիտարկման օբյեկտների լուծարումը կամ դրանց վերակազմավորումը, սեզոնային տատանումներն, ապրանքների և ծառայությունների տեսակների որակական փոփոխություններն և այլն:

Դիտարկման համար ընտրված բնակավայրերում միջին գները միևնույն ապրանքի (ծառայության) համար կարող են էականորեն տարբերվել իրենց գնային մակարդակներով, պայմանավորված ոչ միայն մարզերի սպառողական շուկաների ոլորտում իրականում գոյություն ունեցող գների տարբերություններից, այլ նաև նրանով, որ յուրաքանչյուր բնակավայրում գնադիտարկողն իրավասու է միևնույն ապրանքի կամ ծառայության համար ընտրել՝ տվյալ մարզի սպառողական շուկային բնորոշ ներկայացուցչական տեսակներ: Տվյալ բնակավայրին յուրահատուկ են դիտարկվող ապրանքատեսակների մանրամասնեցված տեխնիկական բնութագրերը, սակայն ընդհանուր առմամբ դրանք պետք է համապատասխանեն ՀՀ ՎԿ կենտրոնական գրասենյակի համապատասխան բաժնի կողմից ներկայացված ապրանքի և ծառայության մոտավոր տեխնիկական բնութագրի պահանջներին:

Օրինակ՝ եթե «կարագ» (ընդհանրացված) անվանումով ապրանքի համար ընդհանուր բնութագրի պարտադիր պահանջներից են հանդիսանում սերուցքային լինելը, յուղայնության տոկոսը, փաթեթավորման եղանակը և այլն, ապա դիտարկման բնակավայրի համապատասխան գին դիտարկող մասնագետը դիտարկման համար ընտրում է իրենց բնակավայրի համար առավելապես ներկայացուցչական արտադրատեսակ՝ ըստ արտադրողի տեսականու, փաթեթավորման և այլն: Ընտրված տեսականու բնութագրերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է ՀՀ ՎԿ կենտրոնական գրասենյակի համապատասխան բաժնի՝ համաձայնեցման համար:

Վերը նշվածից ելնելով, միջին գների և դրանց փոփոխության մասին տեղեկատվությունը ոչ միշտ կարող է արտացոլել գների մակարդակի և դինամիկայի մասին իրական պատկերը, հետևաբար, դրա փոփոխությունները չեն կարող օգտագործվել գների փոփոխությունը ճշգրիտ բնութագրելու համար, իսկ դրա հրապարակումը կարող է որոշակի տարակուսանք առաջացնել սպառողների մոտ:

## IX. ՀՀ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԻ ՀԱՇՎԱՐԿԸ

### 1. Տարրական ագրեգատների ինդեքսներ

ՍԳԻ-ի հաշվարկներում տարրական ագրեգատներ են համարվում բոլոր ապրանք-ծառայությունները, որոնցից կազմված է սպառողական գների ինդեքսի զամբյուղը, կամ ՍԳԻ-ի հավաքակազմում ընդգրկված ապրանքներն ու ծառայությունները, որոնց գները և ինդեքսները մասնակցում են հաշվարկներում և ունեն համապատասխան կշիռներ:

Տարրական ապրանքի (ծառայության) գինը ձևավորվում է որպես միջին երկրաչափական մեծություն բոլոր այն գնային ցուցանիշներից, որոնք արձանագրվել են տվյալ ժամանակահատվածում կոնկրետ ապրանքի կամ ծառայության համար:

ՍԳԻ-ի հաշվարկներում որպես տարրական ինդեքսներ հանդիսանում են ապրանքների և ծառայությունների ներկայացուցիչների գների հարաբերական մեծությունների (ինդեքսային գործակիցների) միջին երկրաչափական մեծությունը:

$$I_j = \frac{P_{jt}}{P_{jo}}$$

որտեղ՝

- $I_j$       j-րդ ապրանքի (ծառայության) ներկայացուցչի գների հարաբերական մեծությունն է (ինդեքսային գործակիցը) ընթացիկ t ամսում,
- $P_{jt}$       j-րդ ապրանքի (ծառայության) ներկայացուցչի գինն է ընթացիկ t ամսում,
- $P_{jo}$       j-րդ ապրանքի (ծառայության) ներկայացուցչի գինն է ընթացիկ t ամսում բազիսային կամ նախորդ ամսում,

Էլեմենտար ագրեգատի ինդեքսը հաշվարկվում է որպես՝

$$\overline{I}^f = \sqrt[n]{I_1^* I_2^* \dots I_n}$$

j-րդ ապրանքի (ծառայության)՝ էլեմենտար ագրեգատի ինդեքսային գործակիցն է ընթացիկ t ամսում,

n - էլեմենտար ագրեգատի ապրանքի (ծառայության) ներկայացուցիչների՝ գների հարաբերական մեծությունների (ինդեքսային գործակիցների) քանակն է:

Վերը նշված բանաձևը կոչվում է **Ջևոնսի** բանաձև և համարվում է միջազգայնորեն ընդունված ՍԳԻ-ի հաշվարկներում տարրական ագրեգատների ինդեքսների հաշվարկման համար կիրառվող մի քանի բանաձևերից նախընտրելին, քանզի այն բավարարում է

ինդեքսների համար կարևորագույն սկզբունքներից մեկին՝ ժամանակագրական փոխադարձելիությանը, որն իր հերթին նշանակում է, որ գների ինդեքսների դինամիկ շարքերի հաշվարկները չպետք է ունենան կախվածություն այն բազիսային ժամանակահատվածից, որն ընտրվել է համեմատության համար:

Հանրապետության համար յուրաքանչյուր ապրանքի կամ ծառայության գների (սակագների) միջին ինդեքսը՝ անհատական ինդեքսը, հաշվարկվում է որպես դիտարկվող բոլոր բնակավայրերի համապատասխան ինդեքսների միջին թվաբանական կշռված մեծություն: Որպես տեսակարար կշիռ հաշվարկներում օգտագործվում են դիտարկվող մարզերի (համապատասխան բնակավայրերի) կշիռների մասին ցուցանիշները:

Հանրապետության կտրվածքով անհատական կամ տարրական գների ինդեքսը հաշվարկվում է կշռված միջին թվաբանականով՝

$$\bar{I}_j = \frac{\sum I_{ij} Q_i}{\sum Q_i},$$

որտեղ՝

$I_{ij}$  - j – թղ ապրանքի, ծառայության անհատական ինդեքսն է i-րդ բնակավայրում,

$Q_i$  - i-րդ բնակավայրի տեսակարար կշիռն է ընդամենը ՀՀ-ում,

$$\sum Q_i = 100:$$

Անհատական գների ինդեքսները ոչ միշտ են լինում ընկալելի սպառողների կողմից, օրինակ, սեզոնային ապրանքների բացակայության կամ ժամանակավորապես բացակայող ապրանքների դեպքում, երբ իրականացվում են պայմանական ինդեքսների իմպուտացիաներ-հաշվարկներ, ինչով պայմանավորված ՍԳԻ-ի հրապարակումներում դրանք չեն ներկայացվում: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ դրանք հանդիսանում են այն կարևորագույն հիմքային սյուները, որոնց վրա հիմնվելով կառուցվում են ագրեգացման ավելի բարձր մակարդակի գների ինդեքսները և ի վերջո՝ ընդամենը ՍԳԻ-ն:

## 2. ՍԳԻ-ի ագրեգացումը և հաշվարկը

Տարրական ագրեգատների կամ անհատական գների ինդեքսների և սպառողական ծախսումների հիման վրա հաշվարկված ապրանքների և ծառայությունների համապատասխան տեսակարար կշիռների միջին թվաբանական կշռված մեծությունների արդյունքում ստանում ենք ԱՍԸՆ դասակարգչի սպառողական ապրանքների և ծառայությունների զանազան խմբավորումների ագրեգացված գների ինդեքսներ՝ ենթադասերի, դասերի, հատվածների համար և ընդամենը ՍԳԻ: Ագրեգացման նման մեթոդով ստացվում են նաև բոլոր անհրաժեշտ այլ խմբավորումների ինդեքսները:

ՍԳԻ-ի հաշվարկման համար, որպես առավել արժանահավատ և մի քանի անհրաժեշտ պահանջներին բավարարող բանաձև, կիրառվում է միջազգայնորեն ընդունված Լասպեյրեսի բանաձևը:



Լասպեյրեսի բանաձևը հիմնված է նախորդ ժամանակաշրջանի հետ համեմատած գների հարաբերական ցուցանիշների, ինչպես նաև բազիսային անփոփոխ կշռվածության վրա:

ՀՀ-ում կիրառվում է Լասպեյրեսի բանաձևի մոդիֆիկացված տարբերակը.

$$I_{on} = \frac{\sum P_n / (P_{n-1} Q_{n-1})}{\sum P_0 / Q_0} \times 100,$$

որտեղ՝

$$P_{n-1}, Q_0 = P_0 / Q_0 \times \frac{P_{1j}}{P_{0j}} \times \frac{P_{2j}}{P_{1j}} \times \frac{P_{3j}}{P_{2j}} + \dots + \frac{P_{n-1j}}{P_{n-2j}}$$

ՀՀ սպառողական գների ինդեքսի համապատասխան ենթախմբերի, խմբերի և ընդամենը ՍԳԻ-ի հաշվետու ամսվա ինդեքսը՝ նախորդ ամսվա նկատմամբ, հաշվարկվում է վերը նշված տարրական ինդեքսների (դեկտեմբերի նկատմամբ) համապատասխան կշիռներով ագրեգացման միջոցով, և բաժանվում է նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի վրա՝ կիրառելով Լասպեյրեսի հետևյալ բանաձևը.

$$I_{t/t-1} = \frac{\sum_{j=1}^n p_{j,0} q_{j,0}^X i_{j,t/d}}{\sum_{j=1}^n p_{j,0} q_{j,0}^X i_{j,t-1/d}}$$

որտեղ՝

$I_{t/t-1}$  – սպառողական գների ինդեքսն է նախորդ ամսվա նկատմամբ,

$p_{j,0} q_{j,0}$  – բազիսային ժամանակաշրջանի  $j$ -րդ ապրանքի տեսակարար կշիռն է,

$i_{j,t/d}$  – նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ ընթացիկ ամսվա ինդեքսն է,

$i_{j,t-1/d}$  – նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ նախորդ ամսվա ինդեքսն է,

$t$  – ընթացիկ ժամանակաշրջանն է,

$t-1$  – նախորդ ժամանակաշրջանն է,

$n$  – ապրանք (ծառայությունների) քանակն է:

**ՃԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԲԱՑԱԿԱՅՈՂ ԿԱՄ ՍԵՂՈՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ  
(ՇԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ԳՆԵՐԻ (ՍԱԿԱԳՆԵՐԻ) ԴԻՏԱՐԿՄԱՆ և ԴՐԱՆՑ  
ԻՆԴԵՔՍՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ  
ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**

Սպառողական գների ինդեքսի հնարավորին չափով առավելագույն ճշգրիտ և արժանահավատ տեղեկատվություն ստանալու կարևորագույն և անհրաժեշտ պայմաններից է հանդիսանում երկարաժամկետ՝ անընդմեջ միջակայքում գների և սակագների մակարդակի դինամիկայի մասին տեղեկատվության ապահովումը:

Հայաստանի Հանրապետության Արժույթի Միջազգային Հիմնադրամի Տվյալների Տարածման Հատուկ Ստանդարտ անդամակցության պայմաններում՝ փաստացիորեն կիրառելով գների մակարդակի և դրանց փոփոխությունների մասին վիճակագրական տվյալների հավաքագրման և մշակման միջազգային մեթոդաբանության սկզբունքները, ՀՀ պետական վիճակագրական մարմիններն առնչվել են հարակից ժամանակահատվածներում դիտարկման համար ընտրված արտադրանք-ներկայացուցիչների գների մակարդակի մասին համադրելի տեղեկատվություն ստանալու խնդրին:

Այսպիսի խնդիրներ գնային տեղեկատվություն հավաքագրող մասնագետների մոտ կարող են առաջանալ երկու հիմնական պատճառներով:

Առաջին դեպքում՝ եթե սպառողական ինդեքսի հաշվարկման համար ընտրված ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչը ժամանակավորապես բացակայում է վաճառքի, և բնականաբար, դիտարկման համար ընտրված առևտրի և ծառայության կետերից՝ տնտեսական, կազմակերպչական, տեխնիկական կամ այլ պատճառներով:

Երկրորդ դեպքը պայմանավորվում է սպառողական շուկայից սեզոնային ապրանքների պարբերաբար ժամանակավորապես բացակայությամբ:

Սպառողական շուկայից ապրանքատեսակը կարող է նաև վերջնականապես անհայտանալ՝ արտադրության դադարեցման պատճառով:

**ա. Ապրանքատեսակների բացակայության պատճառները և դրանց փոխարինման հիմնական մեթոդները**

Առանձին ապրանքների (ծառայությունների) գների ամսական փոփոխությունները բնութագրող տվյալների ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացության, որ կիրառելով բացակայող ապրանքների համար գների պայմանական հաշվարկների մեթոդիկան, էականորեն մեղմվում և հարթեցվում է բացասական գործոնների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի որակի վրա:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ բացակայող ապրանքատեսակներն անտեսելով և թերագնահատելով դրանց գնային փոփոխությունների պայմանական հաշվարկների ազդեցությունը ինդեքսների վրա, կարող է հանգեցնել սպառողական գների իրական ինդեքսի զգալի շեղումների:

Ապրանքների փոփոխման համար ընտրված մեթոդը պայմանավորվում է տարբեր գործոններով, կախված դրանց իրականացման պայմանների յուրահատկություններից, բացակայության պատճառներից, դրանց գների մասին համապատասխան տվյալների առկայությունից (այսինքն բազիսային և հաշվետու ժամանակաշրջաններում պետք է ապահովվի համապատասխան քանակության գնային տեղեկատվություն):

Սպառողական շուկայից այս կամ այն ժամանակահատվածում հետազոտվող ապրանքները կարող են բացակայել տարբեր պատճառներով:

Բացակայող ապրանքատեսակը բնութագրող չափորոշիչներից է սպառողական շուկայից բացակայելու տևողությունը (անհրաժեշտ է պարզել, թե ապրանքատեսակը բացակայելու է ընդմիջտ, թե ժամանակավորապես):

**Ժամանակավորապես բացակայող** է համարվում այն ապրանքը, հետևապես դրա գնի մասին տեղեկատվությունը, որն ունի սպառողական շուկայում նորից ի հայտ գալու հավանականություն: Ապրանքատեսակը պարզապես անհայտացել է սպառողական շուկայից տարբեր պատճառներով՝ տեխնիկական, տրանսպորտային և այլն: Ժամանակավորապես բացակայող ապրանքներ կարող են համարվել նաև սեզոնային բնույթ ունեցող ապրանքները, ինչպիսիք են բանջարեղեն և միրգ ապրանքախմբերի թարմ ապրանքատեսակները, հագուստի և կոշիկեղենի որոշ տեսակներն և այլն: Վերջիններիս բացակայությունը շուկայից և հետագայում ի հայտ գալու մոտավոր ժամանակահատվածը կանխարգուշակելի է:

Ժամանակավորապես բացակայող ապրանքների բացակայության ժամանակ, գների ինդեքսների ազդեցական ընթացքում, տվյալ ապրանքի համար որպես գնի ինդեքս օգտագործվում է համապատասխան ենթախմբի գների ինդեքսը, հաշվարկված ենթախմբի առկա ապրանքատեսակներով:

**Ընդմիջտ բացակայող** համարվում է այն ապրանքը, որը համեմատաբար երկար ժամանակ (2-3 ամսից ավելի) բացակայել է սպառողական շուկայից, չի ունեցել սպառում, հետևաբար ապագայում չի նախատեսվում դրա արտադրությունը նախկին որակական հատկանիշներով:

Սպառողական ապրանքների դիտարկման գործող ցանկում հնարավոր է և անհրաժեշտ իրականացնել **ընդմիջտ բացակայող** ապրանքատեսակի փոփոխություն, քննարկելով փոփոխման անհրաժեշտության հարցը բազային առևտրի կետերի ապրանքագետ մասնագետների հետ:

Քանի որ այդ ապրանքները (ընդմիջտ բացակայող) մշտապես անհասանելի են սպառողների համար և դրանց գների դիտարկումն անհնարին է, դրանք փոխարինվում են նոր, նմանատիպ ապրանքներով, որոնց ընդհանրացված տեխնիկական բնութագրերը հիմնականում համապատասխանում են նախկինում դիտարկվող ապրանքի բնութագրին:

Դրա հետ մեկտեղ վերը նշված ապրանքատեսակները կարող են նաև փոխարինվել մեկ ուրիշ ապրանքատեսակով, եթե դրանք կորցրել են իրենց արդիականությունը կամ բնակչության սպառման կառուցվածքում էական ծավալ չեն կազմում: Դրա մասին առաջին տեղեկատվությունը ստացվում է գին դիտարկող մասնագետների կողմից և հետագայում ճշգրտվում է տնային տնտեսությունների հետազոտության սպառման ծավալների մասին ամենամյա տվյալների վերլուծությունների ժամանակ, երբ իրականացվում են ՍԳԻ-ի զամբյուղում ներառված ապրանքների տեսակարար կշիռների հաշվարկներ: Պարտադրված փոփոխության ամեն մի դեպք պահանջում է ստեղծված իրավիճակի յուրօրինակ քննարկում և փոփոխման անհրաժեշտ մեթոդիկայի ընտրություն:

Ապրանքատեսակի փոփոխության անհրաժեշտության առաջարկությունը համապատասխան վերլուծություններով և դրա փոփոխման հնարավոր ուղղվածությունը՝ միջազգային մեթոդաբանական ստանդարտներին համապատասխան, ներկայացվում է ՀՀ ՎԿ կենտրոնական գրասենյակի համապատասխան բաժնի մասնագետների կողմից, որը

հիմք է հանդիսանում ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից նշված փոփոխության քննարկման և վերջնական որոշման կայացման համար ՍԳԻ-ի ամենամյա զամբյուղի կազմի և կառուցվածքի վերանայման ու հաստատման ժամանակ:

Ընտրված նոր ապրանքը ՍԳԻ-ի զամբյուղում ներառելու համար անհրաժեշտ է նաև ունենալ դրա գնի մասին տեղեկատվություն առնվազն ինդեքսի հաշվարկման բազիսային ժամանակահատվածի համար:

Գների դիտարկման համար ընտրված ապրանքատեսակի ներգրավվածությունը ՍԳԻ-ի կազմում կարող է վերանայվել և դա փոխարինվել այլ ապրանքատեսակով արդիականացումը կորցնելու պարագայում, երբ նշված ապրանքատեսակի սպառման ծավալը (տեսակարար կշիռը) ընդհանուր սպառման ծավալներում անընդմեջ կրճատվում է:

Հին և ընտրված նոր ապրանքների էական որակական տարբերությունների դեպքում պետք է կիրառվի որակական հարթեցման գործակից: Հակառակ դեպքում գների ինդեքսները կարող են ունենալ իրականից շեղված պատկեր:

Միևնույն ժամանակ պարտադիր կարգով պետք է ապահովվի ապրանքների դիտարկման քանակական համադրելի ցուցանիշը բազիսային և հաշվետու ժամանակահատվածերի համար:

Ապրանքների դիտարկման կետերի քանակական համադրելիությունը խախտելու դեպքում կստացվեն իրական պատկերը խեղաթյուրող գների ինդեքսների շարքեր:

Այսպես օրինակ, եթե բազիսային ժամանակահատվածում առևտրի 4 կետերում են արձանագրվել գնային ցուցանիշներ, իսկ հաշվետու ժամանակահատվածում՝ ընդամենը 3, ապա միջին գինը կարող է տարբերվել բազիսայինից, չնայած գնի փոփոխություն մնացած 3 առևտրի կետերում չի արձանագրվել:

Օրինակ.

	Գին, դրամ		Գնի ինդեքս, %
	Բազիսային ժամանակահատված	Հաշվետու ժամանակահատված	
Ապրանք 1	700	700	100,0
Ապրանք 2	900	-	-
Ապրանք 3	800	800	100,0
Ապրանք 4	600	600	100,0
Միջին գին	750	700	93,3

Իրականում երկրորդ ապրանքի համար հաշվարկվում է պայմանական գին՝ մնացած 3 առևտրի ապրանքների գների ինդեքսների միջին երկրաչափական գների ինդեքսը բազմապատկելով բացակայող երկրորդ ապրանքի բազիսային գնով:

$$P_{1(2)}=P_{0(2)} \times \sqrt[3]{(P_{1(1)}/P_{0(1)}) \times (P_{2(1)}/P_{0(1)}) \times (P_{3(1)}/P_{0(1)})}$$

Սեզոնային ապրանքների դիտարկման առումով ընդունելի է համեմատորեն երկարատև (օրինակ, ծիրանի և բալ/կեռասի համար՝ 9 ամիս) ժամանակահատվածում դիտարկվող ապրանքատեսակի բացակայություն: Այդ դեպքում չի իրականացվում նաև դիտարկվող բազային օբյեկտի վերանայում, փոփոխություն:

## բ. Սեզոնային ապրանքներ

Սեզոնային ապրանքների առկայությունը ՍԳԻ-ի զամբյուղում խնդրահարույց է այնպիսի խիստ սեզոնայնություն ունեցող երկրի համար, ինչպիսին Հայաստանի Հանրապետությունը: Դրա հետ մեկտեղ դրանց առկայությունն ի հայտ է բերում բավականին բարդ և դժվար լուծելի խնդիրներ ՍԳԻ-ն կազմող մասնագետների և օգտագործողների համար:

Սեզոնային ապրանքներ են համարվում այն ապրանքները, որոնք

ա/ տարվա մի որոշ ժամանակահատված (պայմանավորված եղանակային պայմաններով և այլն) ամբողջովին բացակայում են շուկայից,

բ/ առկա են շուկայում ամբողջ տարվա ընթացքում, բայց տարվա որոշ եղանակներին և սեզոններին (պայմանավորված նաև ազգային ավանդույթներով, տոներով) բնութագրվում են գնի և ծավալի պարբերաբար մեծ տատանումներով:

Այն ապրանքները, որոնք պայմանավորված են ա) կետով կոչվում են **վառ կամ սուր արտահայտված սեզոնային ապրանքներ**, իսկ բ) կետով պայմանավորված ապրանքները համարվում են **թույլ արտահայտված սեզոնային ապրանքներ**<sup>1</sup>:

Վառ կամ սուր արտահայտված սեզոնային ապրանքները դասվում են **ժամանակավորապես բացակայող** ապրանքների շարքին: **Ժամանակավորապես բացակայող** կարող է համարվել այն ապրանքը, հետևաբար դրա գնի մասին տեղեկատվությունը, որն ունի սպառողական շուկայում նորից ի հայտ գալու հավանականություն: Ապրանքատեսակը պարզապես անհետացել է սպառողական շուկայից տարբեր՝ սեզոնայնությամբ, տեխնիկական, տրանսպորտային և այլ պայմանավորված պատճառներով: Ժամանակավորապես բացակայող սեզոնային ապրանքներին են դասվում այնպիսի ապրանքներ, ինչպիսիք են բանջարեղեն և միրգ ապրանքախմբերի թարմ ապրանքատեսակները, հագուստի և կոշիկեղենի որոշ տեսակներ և այլն: Վերջիններիս շուկայից բացակայությունը և հետագայում ի հայտ գալու մոտավոր ժամանակահատվածը կանխագուշակելի է:

Ինչպես արդեն նշվել է, սեզոնային ապրանքները, իսկ ավելի ճշգրիտ՝ վառ արտահայտված սեզոնային ապրանքները, համարվում են ժամանակավոր բացակայող ապրանքներ և դրանց դիտարկման ու բացակայության պայմաններում ինդեքսների ազդեցացման համար կիրառվում է ժամանակավորապես բացակայող ապրանքների համապատասխան մեթոդաբանությունը:

Ժամանակավորապես բացակայող ապրանքների բացակայության ժամանակ, գների ինդեքսների ազդեցացման համար, տվյալ ապրանքի համար պայմանական գինը և հետևաբար գնի ինդեքսը հաշվարկվում է օգտագործելով արձանագրված վերջին գինը և ԱՍԸՆ դասակարգչի 5-րդ ենթադասի (որում ընդգրկված է բացակայող ապրանքը) առկա ապրանքների գների փոփոխություններով ձևավորված ինդեքսային գործակիցը: Սեզոնային

<sup>1</sup> Սեզոնային ապրանքների հաշվարկման մեթոդաբանությունը մանրամասն ներկայացվում է նաև Balk-ի (1980a, p. 7; 1980b, p. 110; 1980c, p. 68). Diewert-ի (1998b, p. 457) աշխատանքներում:

ապրանքների բացակայության պայմաններում բացակայող ապրանքի անհատական գնի ինդեքսի փոխարեն օգտագործվում է համապատասխան 5-րդ ենթադասի գնի ինդեքսը:

Միջազգայնորեն ընդունված մեթոդներից է արձանագրված վերջին ամսվա միջին գին համարել, ոչ թե ապրանքի իրականում արձանագրված գինն, այլ “տիպային” կոչված գինը, որից սկսած բացակա ամիսների համար օգտագործելով համապատասխան ենթադասի ինդեքսները՝ կատարվում է պայմանական գների հաշվարկ:

Առանձին ապրանքների (ծառայությունների) գների ամսական փոփոխությունները բնութագրող տվյալների ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացության, որ կիրառելով բացակայող ապրանքների համար գների պայմանական հաշվարկների մեթոդիկան, էականորեն մեղմվում և հարթեցվում է բացասական գործոնների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի որակի վրա:

Այստեղ կարևորվում է դրանց գների արձանագրման և հաշվարկման կարգը՝ թե շուկայում ի հայտ գալու որ պահից պետք է սկսել արձանագրված գների ներառումը ՍԳԻ-ի հաշվարկներում, ինչպես նաև շուկայում դրանց առաջարկը պակասելու դեպքում որ պահից դադարեցնել դրանց հաշվառումը ՍԳԻ-ի հաշվարկներում:

Ըստ ՀՀ ՍԳԻ-ի մեթոդաբանության վառ արտահայտված սեզոնային ապրանքների արձանագրված գները **ներառվում են կամ չեն ներառվում ինդեքսի հաշվարկներում**, հիմնականում հաշվի առնելով տվյալ տարվա բնակլիմայական իրավիճակը և դրանցով սպառողական շուկայի հազեցվածությունը:

Վառ արտահայտված սեզոնային ապրանքների թվին են դասվում միրգ, բանջարեղեն ապրանքախմբերում՝ ծիրանը, դեղձը, ելակը, նուռը, մանդարինը, կանաչ լոբին և այլն:

Միևնույն ժամանակ տվյալ տարվա բնակլիմայական խիստ յուրօրինակության պայմաններում, որպես լրացուցիչ պայման սեզոնային ապրանքի ՍԳԻ-ի հաշվարկներում ներառման բացառման համար հաշվի է առնվում նաև դրանց քանակային առկայությունը սպառողական շուկայում: Դիտարկման օբյեկտներում արձանագրված գների քանակը ընդհանուր դիտարկման քանակում՝ երբ այդ ապրանքը առկա է բոլոր բազային դիտարկման առևտրի կետերի ընդհանուր քանակի կեսից ավելի օբյեկտներում, տվյալ սեզոնային ապրանքի գինը ներառվում է ՍԳԻ-ի հաշվարկներում, և չի ներառվում, եթե այն չի գերազանցում վերը նշված ցուցանիշը :

ՀՀ սպառողական շուկայում թույլ արտահայտված սեզոնային ապրանքների դասին են պատկանում բանջարեղենի և մրգի այն տեսակները, որոնք ունեն վաղահաս և ուշահաս տեսակներ, օրինակ՝ կարտոֆիլը, գազարը, ճակնդեղը, կաղամբը, խնձորը, ինչպես նաև վարունգի և լոլիկի ձմեռային (փակ գրունտային՝ ջերմոցային) և ամառային (բաց գրունտային) տեսակները: Դրանց մեկը մյուսով փոխարինման ժամանակացույցը հստակորեն որոշված է: ՀՀ բնակլիմայական պայմանների տարիների ընթացքում ձևավորված պատմությունից ելնելով նոր բերքի ներգրավումը ՍԳԻ-ի հաշվարկներում սովորաբար կատարվում է սկսած հունիս ամսից: Հին բերքից նորին անցման գործընթացի ժամանակ հունիս ամսվա առաջին գնադիտարկման ժամանակ հին և նոր բերքի գները համամասնորեն ներգրավվում են ՍԳԻ-ի հաշվարկներում, իսկ երկրորդ դիտարկումից սկսած դիտարկվում են բացառապես նոր բերքի գները:

Վերը նշված գործընթացի ժամանակացույցը կարող է վերանայվել տվյալ տարվա սպառողական շուկայի առկա իրավիճակից, պայմանավորված տարվա բնակլիմայական իրավիճակից ելնելով հին և նոր բերքի առկայությունից:

Թույլ արտահայտված սեզոնային ապրանքները բացակա ամիսներ չեն ունենում, դրանք միշտ առկա են սպառողական շուկայում, ընդամենը անցումային ամիսներին հին բերքի գներից անցում է կատարվում նոր բերքի գներին: Դրանց համար պայմանական գների որևէ հաշվարկներ չեն իրականացվում:

Վառ արտահայտված սեզոնային ապրանքների դասին են պատկանում նաև ոչ պարենային ապրանքներից հագուստի և կոշկեղենի որոշ տեսակները:

Ոչ պարենային ապրանքների վառ արտահայտված սեզոնային տեսակների բացակայող գների համար նույնպես օգտագործվում է համընկման մեթոդը:

Ոչ պարենային ապրանքների վառ արտահայտված սեզոնային տեսականու պայմանական գների հաշվարկների համար կիրառվում է այսպես կոչված «տիպային» գնի մեթոդը: Ապրանքի սպառողական շուկայից բացակայության առաջին ամսվա համար տեղադրվում է տվյալ ապրանքի սեզոնին բնորոշ ամսվա արձանագրված գինը, որը դեռ չի ենթարկվել զեղչային գործընթացների: «Տիպային» գնի մակարդակից իրականացվում է պայմանական գների և դրանց ինդեքսների հաշվարկները մինչ իրական գնի արձանագրումը նույնատիպ մեթոդաբանությամբ, ինչը նկարագրվել էր ժամանակավոր բացակայող ապրանքների գների հաշվարկման համար:

ՀՀ ՍԳԻ-ի հաշվարկներում չի կիրառվում գների կրկնման մեթոդը, երբ վերջին արձանագրված գինը կրկնվում է մինչև ապրանքի ի հայտ գալը:

## **XI. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԳՆԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԵԹՈԴ**

Ինչպես արդեն նշվել է սեզոնային ապրանքի բացակայության ժամանակ օգտագործվում է համապատասխան խմբի ինդեքսը: Այդ գործողությունը իրականացվում է մինչև սպառողական շուկայում ապրանքատեսակի ի հայտ գալը: Հաշվետու ամսում ՍԳԻ-ի հաշվարկներում սեզոնային ապրանքի գնի ներառման ժամանակ նախորդ ամսվա համար որպես պայմանական գին տեղադրվում է բացակա ամիսներին համապատասխան ապրանքախմբի ինդեքսներով վերահաշվարկված գինը, որի հաշվարկը սկսվում է արձանագրված վերջին գնից մինչ դրա ի հայտ գալու ամսվա նախորդող ամիսը: Պայմանակայնորեն հաշվարկված այդ գնի և հաշվետու ամսվա փաստացի գնի հիման վրա հաշվարկվում է տվյալ ապրանքի ընթացիկ ամսվա գնի ինդեքսը:

Ժամանակավորապես բացակայող սեզոնային ապրանքի պայմանական գնի հաշվարկման օրինակ.

	VII/2015	VIII/2015	IX/2015	X/2015	XI/2015	XII/2015	I/2016	II/2016
Ա ապրանքի գինը, դրամ	500	500x 1.02= 510	510x 0.99= 504.9	504.9x0.9 8= 494.8	494.8x 1.00= 494.8	494.8x 1.03= 509.6	509.6x1.0 0= 509.6	600
Ա ապրանքի համախմբի առկա ապրանքներով հաշվարկված ինդեքսային գործակիցները	1.01	1.02	0.99	0.98	1.00	1.03	1.00	1.18

## XII. ՈՐԱԿԻ ՃՇԳՐՏՄԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ

Դիտարկվող ապրանքի կամ ծառայության որակական փոփոխությունների մասին տեղեկատվությունն առաջնահերթ ստացվում է գնադիտարկման ընթացքում գին դիտարկող մասնագետի կողմից: Առևտրի կետի աշխատակիցների և համապատասխան մասնագետների օգնությամբ գնադիտարկող մասնագետը հաշվարկում է որակական փոփոխության արժեքը: Որակի ճշգրտման այս մեթոդը կոչվում է **էքսպերտային՝ տրամաբանական ճշգրտում:**

Դրա հետ մեկտեղ ՀՀ ՍԳԻ-ի հաշվարկման համար կիրառվում են որակի ճշգրտման այլ մեթոդներ՝

- ուղղակի կամ պարզ համադրման,
- ապրանքների տեսականու ժամանակային համընկման,
- ընդհանուրի միջինի բաշխման կամ կամրջային համընկման,
- հոմոգեն մոդելի (ապրանքի ներկայացուցչի) փոփոխության տեղադրման,
- տարբերակի արժեքի (չափի միավորների) ճշգրտման:

ՀՀ ՍԳԻ-ի հաշվարկներում կիրառվող որակի ճշգրտման մեթոդներն ըստ առանձին ապրանքախմբերի՝

- պարենային ապրանքներ՝ ուղղակի համադրման, տարբերակի արժեքի և կամրջային համընկման,
- հագուստեղեն և կոշիկեղեն՝ ուղղակի համադրման, կամրջային համընկման,
- ավտոմեքենաներ՝ ուղղակի համադրման, էքսպերտային գնահատման, կամրջային համընկման,
- հեռուստացույցներ, լվացքի մեքենաներ, սեղանի համակարգիչներ, նոութբուկներ, կահույք, տնային էլեկտրոնային սարքավորանք՝ ուղղակի համադրման, համընկման և կամրջային համընկման:



**Օրինակ 1 Ուղղակի կամ պարզ համադրում**

Ապրանքի տեսականի	Գների ինդեքս. 1 ամիս	Գինը 1-ին ամսում	Գինը 2-րդ ամսում	Ինդեքսների գործակից 2/1	Գների ինդեքս. 2 ամիս
Մոդել A	125.0	150	160	1.067	133.3
Մոդել B	150.0	225	250	1.111	166.7
Մոդել C	125.0	140			
Փոխարինում 1		165 (165-140)=25 (որակական տարբերության արժեքը)	180	1.091	136.4 (125.0x1.091)
Էլեմենտար ագրեգատի ինդեքս (միջին երկրաչափական)	132.83			1.0895	144.7 (1.0895x132.83)

**Օրինակ 2 Ապրանքների տեսականու ժամանակային համընկման մեթոդ**

Ապրանքի տեսականի	Գների ինդեքս. 1 ամիս	Գինը 1-ին ամսում	Գինը 2-րդ ամսում	Ինդեքսների գործակից 2/1	Գների ինդեքս. 2 ամիս
Մոդել A	125.0	150	160	1.067	133.3
Մոդել B	150.0	225	250	1.111	166.7
Մոդել C	125.0	140	-		
Փոխարինում 1		160	180	1.125	140.6 (125.0x1.125)
Էլեմենտար ագրեգատի ինդեքս (միջին երկրաչափական)	132.83			1.101	146.2 (1.101x132.83)

**Օրինակ3 Ընդհանուրի միջինի բաշխում կամ կամրջային համընկման մեթոդ**

Ապրանքի տեսականի	Գների ինդեքս. 1 ամիս	Գինը 1-ին ամսում	Գինը 2-րդ ամսում	Ինդեքսների գործակից 2/1	Գների ինդեքս. 2 ամիս
Մոդել A	125.0	150	160	1.067	133.3
Մոդել B	150.0	225	250	1.111	166.7
Մոդել C	125.0	140	(152.4) =140x1.089	1.089	136.1
Փոխարինում 1 (Մոդել C համար)			180		
Էլեմենտար ագրեգատի ինդեքս (միջին երկրաչափական)	132.83			1.089	144.6

**Օրինակ4 Հոմոգեն մոդելի (ապրանքի ներկայացուցչի) գնային փոփոխության միջոցով գնի հաշվարկ**

Ապրանքի տեսականի	Գների ինդեքս. 1 ամիս	Գինը 1-ին ամսում	Գինը 2-րդ ամսում	Ինդեքսների գործակից 2/1	Գների ինդեքս. 2 ամիս
Մոդել A	125.0	150	160	1.067	133.3
Մոդել B	150.0	225	250	1.111	166.7
Մոդել C (Մոդել C համար)	125.0	140	(155.6) =140x1.111	1.111	138.9
Փոխարինում 1			180		
Էլեմենտար ագրեգատի ինդեքս (միջին երկրաչափական)	132.83			1.096	145.6

**Մոդել C-ն հոմոգեն է Մոդել B-ի հետ:**

Գինը գրանցում ենք 2 ամսում, բայց չենք օգտագործում ինդեքսի հաշվարկում մինչև 3-րդ ամիսը: 3-րդ ամսին համեմատվում է երկրորդ ամսվա գրանցված գնի հետ, կապակցվելով 132.83 ինդեքսին:

### **XIII. ՀՀ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԻ ՀԱՇՎԱՐԿԸ ՏԱՐԲԵՐ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ**

ՀՀ ՍԳԻ-ն հաշվարկվում է ամսական պարբերականությամբ տարբեր ժամանակահատվածների համեմատ, բազիսային՝ նախորդ տարվա համապատասխան ամսվա, նախորդ ամսվա, նախորդ տարվա դեկտեմբեր ամսվա, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ: Հաշվարկվում են նաև եռամսյակային և նախորդ տարվա նկատմամբ ինդեքսներ:

Նախորդ տարվա դեկտեմբերի և նախորդ ամսվա նկատմամբ ինդեքսների հաշվարկների մեթոդաբանությունը և կիրառվող բանաձևերը նկարագրված են նախորդ բաժիններում:

#### **ՍԳԻ-ն նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ**

ՍԳԻ-ի հաշվարկը նախորդ տարվա համապատասխան ամսվա համեմատ կատարվում է ըստ հետևյալ բանաձևի.

$$I_{t/t-12} = \frac{I_{t/o}}{K}$$

որտեղ

$$K = \frac{I_{t-12/0}}{I_o}$$

որտեղ՝

$I_{t/t-12}$  - ընթացիկ ամսվա ինդեքսն է նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ,

$I_{t/o}$  - ընթացիկ տարվա հաշվետու ամսվա ինդեքսն է բազիսային ժամանակաշրջանի (նախորդ տարվա դեկտեմբեր) նկատմամբ,

$I_{t-12/0}$  - նախորդ տարվա համապատասխան ամսվա ինդեքսն է դրան նախորդող տարվա դեկտեմբեր ամսվա նկատմամբ,

$I_o$  - նախորդ տարվա դեկտեմբեր ամսվա ինդեքսն է դրան նախորդող տարվա դեկտեմբեր ամսվա նկատմամբ:

### ՍԳԻ-ն նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ

ՍԳԻ-ի հաշվարկը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատ կատարվում է հետևյալ կերպ.

$$I_{(1-n)t/(1-n)t-1} = \frac{I_{(1-n)t/to}}{K}$$

որտեղ՝

$$K = \frac{I_{(1-n)t-1(t-1)o}}{I_o}$$

որտեղ՝

$I_{(1-n)t/(1-n)t-1}$  - ընթացիկ տարվա համապատասխան ժամանակաշրջանի ինդեքսն է նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ,

$I_{(1-n)t/to}$  - ընթացիկ տարվա ամիսների ինդեքսներն են նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ,

$I_{(1-n)t-1(t-1)o}$  - նախորդ տարվա ամիսների ինդեքսներն են բազիսային ժամանակաշրջանին նախորդող տարվա դեկտեմբերի նկատմամբ,

$I_o$  - նախորդ տարվա դեկտեմբեր ամսվա ինդեքսն է դրան նախորդող տարվա դեկտեմբեր ամսվա նկատմամբ:

### XIV. ՍԳԻ-Ի ԱՄՓՈՓ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

Սպառողական գների ինդեքսի հաշվարկից հետո յուրաքանչյուր ամիս այն ներկայացվում է տեղեկատվական նյութերում հետևյալ կտրվածքով՝

- ✓ ըստ ԱՍԸՆ դասակարգչի 2-ից 5 նիշ մակարդակի (ըստ ամիսների) յուրաքանչյուր ամսվա տոկոսային փոփոխությունը նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ,
- ✓ ըստ ԱՍԸՆ դասակարգչի 2-ից 5 նիշ մակարդակի ըստ հանրապետության և դիտարկվող բնակավայրերի (ըստ ամիսների)՝ յուրաքանչյուր ամսվա տոկոսային փոփոխությունը նախորդ ամսվա նկատմամբ,
- ✓ ըստ ԱՍԸՆ դասակարգչի 2-ից 5 նիշ մակարդակի ինդեքսները ըստ հանրապետության և դիտարկվող բնակավայրերի՝ (ըստ ամիսների) բազիսային ժամանակաշրջանի՝ նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ,
- ✓ ըստ ԱՍԸՆ դասակարգչի 2-ից 5 նիշ մակարդակի տոկոսային փոփոխությունները հանրապետության կտրվածքով (ըստ ամիսների) տարվա սկզբից հաշվարկված ժամանակահատվածը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ (աճողական կարգով),

- ✓ ըստ ԱՍԸՆ դասակարգչի երկու նիշ մակարդակի ինդեքսները հանրապետության կտրվածքով (ըստ ամիսների) պայմանականորեն ընդունված բազիսային տարվա նկատմամբ: